http://ysu.am/main/http:/ysu.am/news/en/Prospective-cooperation-in-the-field-of-cytogenetics



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

+32°C
YSU WEATHER

15 Սեպտեմբերի 2014 | Երկուշաբթի

Էլեկտրոնային փոստ

## Գլխավոր նորություններ



ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՋՋԱԳԵՆԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ

## Գիտություն



«Գիտություն» բաժնում ներկայացված է ԵՊՀ

## Կրթություն



«Կրթություն» բաժնում ներկայացված է ԵՊՀ

## Ֆակուլտետներ



## Օրացույց

| | |
|---|---|
| 04.08.14<br>01.10.14 | Միջազգային գիտ<br>ԵՊՀ փիլիսոփայա<br>հոգեբանության ֆ |
| 11.08.14<br>20.09.14 | ՄԵԿՆԱՐԿԵԼ է 201 |

11.09.2014 | Գիտություն

0

# ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՋՋԱԳԵՆԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ



**Այսօր ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհեց հանրահայտ գերմանացի գիտնական Թոմաս Լիիրին:**

ԵՊՀ ռեկտորի աշխատասենյակում Յենայի համալսարանի մարդու գենետիկայի ինստիտուտի մոլեկուլային բջջագենետիկայի լաբորատորիայի ղեկավարի, մոլեկուլային բջջագենետիկայի բնագավառում միջազգային ճանաչում ունեցող առաջատար մասնագետի հետ հանդիպմանը մասնակցում էին ԵՊՀ պրոռեկտորներ Գեղամ Գևորգյանը, Ալեքսանդր Գրիգորյանը, Ռուբեն Մարկոսյանը, Կենսաբանության ֆակուլտետի դեկան Էմիլ Գևորգյանը, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներն ու ԵՊՀ գիտքարտուղար Մենուա Սողոմոնյանը:

Արամ Սիմոնյանը ողջունեց հյուրին, շնորհակալություն հայտնեց գիտնականին ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի հետ արդյունավետ համագործակցելու և համատեղ ծրագրեր իրականացնելու համար:

«Ուրախալի է, իհարկե, որ մեր երիտասարդ գիտական համալսարանականներն աշխատում են այնպիսի առաջատար մասնագետի հետ, ինչպիսին դուք եք: Հայ-գերմանական գիտական ծրագրերն ու համագործակցությունը սկսվել են վաղուց և շարունակական բնույթ են կրում, ինչը, իհարկե, կարևոր փաստ է մեզ համար»,- ասաց ԵՊՀ ռեկտորը:

Այնուհետև ԵՊՀ գիտական խորհրդի 2014 թ-ի հունիսի 25-ի նիստի որոշմամբ՝ գիտության և կրթության ոլորտում ակնառու նվաճումների, Յենայի Ֆրիդրիխ Շիլլերի և Երևանի պետական համալսարանների միջև գիտական կապերի խորացման, Հայաստանում և ԵՊՀ-ում մոլեկուլային բջջագենետիկայի զարգացման գործում ունեցած մեծ ներդրման և ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի զարգացմանը ցուցաբերած զգալի աջակցության համար դոկտոր Թոմաս Լիիրին շնորհվեց ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

## Գլխավոր նորություններ



ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՋՋԱԳԵՆԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ

ԵՊՀ 95-ԱՄՅԱ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ԵՆ ՍՏԱՑԵԼ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱԽՄԲԵԼ ԷՐ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԸ

## Լրահոս

12.09.14 ՉԻՆԱՐԵՆՆ ՈՒ ՉԻՆԱԿԱՆԸ ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

11.09.14 ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. ՆԱ ՍԱՀԱՊԱՐՏ Է ԵՎ ՈՉ ՄԻԱՅՆ...

11.09.14 ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԲՈՒՀԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԷՐ

11.09.14 ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՋՋԱԳԵՆԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ

11.09.14 ԵՊՀ 95-ԱՄՅԱ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ԵՆ ՍՏԱՑԵԼ

10.09.14 ՄԱՅՐ ԲՈՒՀԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԸ 95 ՏԱՐԵԿԱՆ ԵՆ